391.998
Р-95

Этнические
группы
IV

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

2011-05



ՁԵՐԳԵՐ

IV

91.99Մ
Թ-89

891.99Մ
Թ-95

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՅԵՐԳԵՐ

IV

(ԹԱՐԳՄ. ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Շապկի նկարը
Ա. Գասպարյանի

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

23 APR 2013
8922
2391
38

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

(ԼՈՆԳՖԵԼԼՈՅԻՑ)

Յեկէք, սիրուն իմ մանուկներ,
Վազէք, յեկէք շուտ ինձ մոտ,
Վիշտ ու կասկած դուրս վանեցէք
Իմ ծեր լանջից հիվանդոտ։

Ձեր սրտերում՝ շող ու թրոչուն,
Ձեր մրտքերում՝ վրտակներ,
Ինձ տիրում է արդեն աշուն
Շուտով կրգա և ձրմեռ։

Տաղ կանչեցէք, սիրունիկներս,
Են տաղերը խընդագին,
Վոր թրոչուններն յերգում են ձեզ
Գարնան պայծառ որերին։

Վոչինչ բան է խելքը մարդի,
Յեվ դատարկ է և չընչին
Ձեր մանկական անմեղ շուրթի
Ժրպիտների առաջին։

Ձեզանից լավ՝ յերգ չի տեսել
Գարնան որը վոսկեփայլ,
Դուք եք յերգն ել, խաղն ել, լուսն ել,
Ու առանց ձեզ՝ վողջ մրռայլ։

ԱՇՈՒՆ

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն։
Պաղ-պաղ մեգի հետ
Փըչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին։
Տըխուր հանդերից
Ամենքը տրտում
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն։

ՏԵՐԵՎԱԹԱՓ

«Ա՜յ փոքրիկներ, ա՜յ սիրուններ»,—
Ասավ քամին տերևներին,—
«Աշունն յեկավ, մոտ է՝ ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին։
Վոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Յեկեք ինձ հետ, փախեք ինձ հետ...
Յեկեք տանեմ հեշտ ու անթև
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այսուհետև
Ել ինչ է դող, ինչ է ձմեռ...»

Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սըվսըվալով տխուր յերգեր՝
Քամու թևին թռան, փախան։

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

— Վա՜յ, մայրիկ ջան, տես,
Բակն ու դուռը լի
Ի՞նչքան ըսպիտակ
Թիթեռ է գալի...
Եսքան շատ թիթեռ
Չեմ տեսել յես դեռ։
— Չէ, իմ անուշիկ,
Թիթեռներ չեն եռ.
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ։
Եռ ձուլնն է գալի,
Փաթիլն է ձյունի,
Վոր կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի։

ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները։
— Սուս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված վողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ։

Կրգա գարնան արևն ել յեռ
Իր շողերով կենդանի,
Ձմրան սաստիկ ցըրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կըտանի։

«Յելեք, կասի, իմ մանուկներ».
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կըհանեն գլխիկները,
Աչիկները կըբանան։

ՄԱՐՏ

Ա՜խ, Եսպես ել գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս։
Եսոր ուրախ որ կանի,
Վաղը անձրև ու քամի.
Առավոտը պայծառ ոդ,
Կեսորը մութ ու ամպոտ։
Մին հագնում է սպիտակ,
Մին կանաչին է տալիս.
Մի որ ցուրտ է, մի որ տաք,
Մին խնդում է, մին լալիս...
Ա՜խ, Եսպես ել գիժ ամիս։

ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Տղան ասավ.—Քեզ կըպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին։
Վարդը ասավ.—Տէս, կըծակեմ,
Վոր չըմոռնաս փշոտ վարդին.
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Ու անհամբեր տըղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նըրա ձեռքը ծակեց,
Բայց ել չոգնեց քընքուշ վարդին.
Քընքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐՈՎ

Գիշեր է խոր։
Մենակ բոլոր
Լուսնյակը չի դեռ քնած.
Հեռը գընում, հեռը ցած՝
Նա տեսնում է մութ ծրմակ,
Մութ ծրմակում, կոճղի տակ,
Զոր տերևը ժաժ տալի—
Սունկն աշխարհք է դուրս գալի։

ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաք բարով, դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն։

Մենք յետ կըգանք ձեզ նորեկ գարունքին,
Յերբ զարթնեն ուրախ յերգերը կըրկին,
Յերբ վոր սարերը զուգվեն կանաչով,
Յերբ վոր ջրերը վազեն կարկաչով։

Մնաք բարով, դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն։

Գ Ր Ի Զ

«Ի՞նչ կըլինի, ասա՛, գրի՛չ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ.
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խաղմըզում ես
Սեվ ագռավի ճանկերի պես։
Յես քեզ վատ բան ի՞նչ եմ արել։
Յեկ, խնդրում եմ, ինձ համար էլ
Գրի ենպես արագ-արագ,
Ենպես ուղիղ, սիրուն, բարակ»։
Գրիչը լուռ լըսում, լըսում,
Ճըռճըռում է ու խաղմըզում,
Բայց այս անգամ արդեն, կարծես,
Փոքրիկ ծըտի ճանկերի պես։

ԲԶԵԶԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բըզեզն ամրան մի որ
Դպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ...

— Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Վոր իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ։

Պիտի սովրեք, սովրեք ենքան,
Մինչև դառնաք ինձ պես վարպետ։
Դե նստեցեք հիմի հանդարտ,
Ինչ վոր կասեմ՝ կըրկնեք ինձ հետ։

«Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.
Գ. Գաղտիկուռ, Դ. Դըղում...
Ե՛յ, դո՛ւ մորեխ, դեռն ականջ դիր,
Ի՞նչ ես եղտեղ կըտըրտում։

Յե. Յերիցուկ, Զ. Զանազան.
Ե. Եշխըրտուկ, Ը. Ընկուզ...
Մի՛ աղմըկեք, հանաք հո չի՛.
Թիթեռ՝ հանգի՛ստ. Մոծակ՝ սո՛ւտ։

Մի խառնվեք, չեմ սիրում յես
Եղպես աղմուկ, աղաղակ։
Թ. Թրրթրնջուկ, Ժ. Ժախ ու բոխ,
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ։

Խ. Խընձորուկ, Ծ. Ծիրանի,
Կ. Կրռոթուկ, Հ. Հաղարճ...
— Տես, վարժապետ, ես Մրլակին,
Ինձ ասում է՝ սարի արջ.

—Ա՛յ աղա, էյ, չեն հայհոյիլ,
Տըղղան հիմար անասուն...
Զ. Զըմերուկ, Ղ. Ղանձլամեր,
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր։

Դու, էյ Ծըղրիդ, վոնց ես նըստել.
Գըլուխդ—յեռ, մեջքդ դուրս։
«Յ»*Յունապի, Ն. Նունուֆար,
Շ. Շագանակ, «Ո», Ողկուզ*։

—Վա՛յ, ես ինչեր կան դասերում.
Վողկուզ յես շատ եմ սիրում...
— Իսկ յես կաղամբ կուտեմ—կուտեմ...
— Իսկ յես՝ ծիրան...—իսկ յես՝ կոտեմ...

— Ձեզ չեն հարցնում՝ ինչ կուտեք դուք
Քընաթաթախ՝ առտեհան։
Զ. Զինարի, Պ. Պատատուկ,
Ջ. Ջըրկոտեմ, Ռ. Ռեհան։

---

* Հին ուղղագրությամբ։

Ս. Սերկեվիլ, Վ. Վարդենի,
Տ. Տերեփուկ, Ց. Ցաքի...
Ո՜հ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գըլուխ կըճաքի։

Փ. Փըրփըրուկ, Բ. Բարասոխ,
Ո, Ո՞ֆ, պըրծանք վերջապես...»
Դե գնացեք, վաղը կըգաք
Անդիր արած ջըրի պես։

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մլակ, մոծակ,
Վարպետ Բրզեղն ամառն եսպես
Դաս եր տալի մի ծառի տակ։

363
04
407

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկներին 3
2. Աշուն 4
3. Տերևաթափ 5
4. Առաջին ձյունը 6
5. Ծաղիկները 7
6. Մարտ 8
7. Վարդը 9
8. Ամառվա գիշերով 10
9. Հովվի հրաժեշտը 11
10. Գրիչ 12
11. Բզեզի դպրոցը 13

Պատ. խմբագիր՝ Նվ. Թումանյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտի լիտզոր՝ Ղ—3527. Հրատ. № 4442.
Պատվեր 230. Տիրաժ 6000.
Թուղթ 62×94 Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 24.480 նշան.
Հանձնված է արտադրության 8 մարտի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 22 մարտի 1938 թ.
ԳԻՆԸ 60 կոպ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

«Ազգային գրադարան»
NL0396496

8922